

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՍ-ԲԱՐՇՈՒՄԻԱՆ ԱՆԻ

ԳՐԱԿԱՆ ՄԻՍՏԻՖԻԿԱՑԻԱ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ՍԻՄՎՈԼԻԶՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍԵՂՄԱԳԻՐ

ժ.01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ – 2024

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПЕТРС-БАРЦУМИАН АНИ
ЛИТЕРАТУРНАЯ МИСТИФИКАЦИЯ: ПРОБЛЕМАТИКА И ВОПЛОЩЕНИЕ
В ЛИТЕРАТУРЕ РУССКОГО СИМВОЛИЗМА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата филологических наук по специальности
10. 01. 04 – «Теория литературы»

ЕРЕВАН – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Աշխեն Էդուարդի Զրբաշյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մագդալինա Գեորգիի Զանփոլադյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վահան Սուրենի Նավասարդյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալ-


սարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի նոյեմբերի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат филол. наук, доцент
Ашхен Эдуардовна Джрбашян

Официальные оппоненты: док. филол. наук, профессор
Магдалина Геворговна Джанполадян
канд. филол. наук, доцент
Ваан Суренович Навасардян

Ведущая организация: Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна

Защита диссертации состоится 11 декабря в 14³⁰ часов на заседании Специализированного Совета 012 по литературоведению в г. Ереван, 0025, улица Абовяна 52а, армянский филологический факультет ЕГУ, аудитория 202.

С диссертацией можно ознакомиться в библиотеке Ереванского государственного университета.

Автореферат диссертации разослан 8 ноября 2024 г.

Ученый секретарь совета 012 по литературоведению,



доктор филологических наук,
профессор **А. А. Макарян**

Ուսումնասիրության արդիականությունը: Գրական միստիֆիկացիա են կոչվում այն տեքստերը, որոնք վերագրվում են տվյալ տեքստերի ստեղծողներ չհանդիսացող հորինված հեղինակների, պատմական անձանց կամ գրողների: Գրական միստիֆիկացիաների շարքին են դասվում նաև հեղինակություն չունեցող հորինված երկերը:

Գրական միստիֆիկացիաների ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել և՛ մշակութային-պատմական տեսանկյունից, և՛ գրական որոշ դպրոցների և ուղղությունների համատեքստում, և՛ կոնկետ հեղինակի ստեղծագործության մեջ: Գրական միստիֆիկացիայի երևույթը կարող է ուսումնասիրման առարկա դառնալ գիտության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ փիլիսոփայության և բանասիրության, բայց նաև պատմության, սոցիոլոգիայի, հոգեբանության, քաղաքագիտության և այլնի շրջանակներում: Այս հանգամանքն իր հերթին բերում է մի շարք խնդիրների առաջացման, ինչպիսիք են հեղինակության հարցը, հեղինակի կերպարը միստիֆիկացիայում, գրական միստիֆիկացիայի ստեղծման ու նույնականացման մեթոդները, միստիֆիկացիաների տիպաբանությունը և դասակարգման խնդիրը, միստիֆիկացիայի կառուցվածքը, միստիֆիկացիայի որոշման մեթոդները, միստիֆիկացիան և ընթերցողի սոցիոլոգիան ու հոգեբանությունը, միստիֆիկացիան ընթերցողական շրջանակում տարածելու մեթոդները, ինչպես նաև միստիֆիկացիան նմանատիպ հասկացությունների կողքին, ինչպիսիք են գրագողությունը, ծաղրանմանակումը, ոճավորումը, կեղծանունությունը և կեղծումը, նաև միստիֆիկացիան խաղային տարածքում (խաղ, միֆ, գաղափարախոսություն և այլն): Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի խնդիրներ, որոնք կապված են «գրական միստիֆիկացիա» հասկացության սահմանների և ծավալի, գրականության տեսության մեջ գրական միստիֆիկացիայի տեղի և հեղինակի կերպարի կառուցման սկզբունքների հետ: Այս հարցերը մինչ օրս մնում են վիճելի կամ լիովին չուսում-

նասիրված: Բացի այդ՝ առայսօր բացակայում են համապարփակ հատուկ աշխատանքներ, որոնք նվիրված են ռուս սիմվոլիստների գրական միստիֆիկացիաներին, ինչով էլ պայմանավորված է տվյալ հետազոտության արդիականությունը:

Ուսումնասիրության **օբյեկտը** գրական միստիֆիկացիայի երևույթն է պատմագործառական համատեքստում, **առարկան՝** գրական միստիֆիկացիաները ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ, Ե. Դմիտրիևայի (Վասիլևա) և Յու. Շուցկու գրական միստիֆիկացիան, նաև Սամուիլ Կիսինի (Մունի) գրական միստիֆիկացիան:

Ատենախոսության համար **նյութ** են ծառայել Ս. Կիսինի [Киссин 1999] և Ե. Դմիտրիևայի [Черубина де Габриак 1998] աշխատությունների հրատարակությունները, Ժամանակակիցների հիշողությունները Կիսինի մասին [Киссин 1999], [Ходасевич 1939]; Գ. Դերժավինի [Державин 1867], Ֆ. Դոստոևսկու [Достоевский 2015], [Достоевский 1973], [Достоевский 2014] ստեղծագործությունները, ռուս սիմվոլիստների գրական միստիֆիկացիաները [Петровская 1989], [Дронов 1983], [Лавров 2007] և այլն:

Ուսումնասիրության **նպատակն է** հստակեցնել գրական միստիֆիկացիայի սահմանումը և ներկայացնել գրական միստիֆիկացիաների տիպաբանությունը, ուսումնասիրել գրական միստիֆիկացիայի երևույթը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ, բացահայտել Ե. Դմիտրիևայի (Վասիլևա) - Յու. Շուցկու պսևդոթարգմանության առանձնահատկությունները, որոշել գրական միստիֆիկացիայում հեղինակային կերպարի ստեղծման մեթոդները Սամուիլ Կիսինի (Մունի) ստեղծագործության օրինակով:

Այս առումով դրվել են հետևյալ **խնդիրները**.

1. համեմատել «գրական միստիֆիկացիա» տերմինի սահմանումները՝ ուսումնասիրելով բառի պատմությունը և տերմինի տարածումը, ինչպես նաև

որոշել միստիֆիկացիայի տեղը նմանատիպ հասկացությունների շարքում, ինչպիսիք են կեղծանունությունը, կեղծումը, նմանակումը, ոճավորումը, ծաղրանմանակումը և այլն,

2. ուսումնասիրել գրական միստիֆիկացիայի տեղը գրականության տեսության մեջ. դիտարկել միստիֆիկացիաների առկա դասակարգումները, բնութագրել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «գրական միստիֆիկացիա», «պսևդոկենսագրություն» և «պսևդոթարգմանություն», ուսումնասիրել հեղինակի կերպարը և անունի պոետիկան գրական միստիֆիկացիայում,

3. ուսումնասիրել գրական միստիֆիկացիայի երևույթը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ, դրա կապը Ա. Բելլու եռաստիճանության՝ (միֆաստեղծում – բառաստեղծում – կենսաստեղծում) հետ, նկարագրել ռուս սիմվոլիստների գրական միստիֆիկացիաները,

4. վերլուծել Ե. Դմիտրիևայի (Վասիլևայի) – Յու. Շուցկու կեղծ թարգմանությունը, համեմատել չինական մշակութային և բանաստեղծական ավանդույթի հետ,

5. ուսումնասիրել Ա. Կիսինի (Մունի) գրական միստիֆիկացիան, հեղինակի աստիճանակարգության ստեղծման և միստիֆիկացիայի բացահայտման պատմությունը, վերլուծել Ա. Կիսինի կողմից Ա. Բեկլեմիշևի և Մունիի անուններով հրապարակված երկերը, բացահայտել գրական միստիֆիկացիայի ստեղծման ժամանակ հեղինակի անձի կառուցման մեթոդները:

Ատենախոսության մեջ կիրառվում է համալիր **մեթոդաբանություն**, որը ներառում է հետևյալ փոխլրացնող մեթոդները՝ համատեքստային վերլուծություն, որը թույլ է տալիս մեկնաբանել առանձին ստեղծագործությունները որոշակի հեղինակի պոետիկայի լույսի ներքո, միջտեքստային վերլուծություն, որը բացահայտում է ներտեքստային ասոցիատիվ կապերը և հնարքները, առասպել-

լաբանական և մոտիվային վերլուծություն, որն ուղղված է տեքստի մեկնաբանությանը առասպելական տարրերի, կերպարների և մոտիվների տեսանկյունից, կառուցվածքաբանական վերլուծություն, որը հաստատում է առանձին տարրերի հարաբերությունների համակարգը և դրանց ընդհանուր սկզբունքները գեղարվեստական ամբողջականության մեջ, համեմատական վերլուծություն: Այն բացահայտում է Լի Սյան Ձիի «Տանձենու տակի տնակը» (Ե. Դմիտրիևայի (Վասիլևայի)- Յու. Շուցկու գրական միստիֆիկացիան) պսևդոնիմական շարքի առանձնահատկությունները, ինչպես նաև Ալեքսանդր Բեկլեմիշևի (Կիսին) գրական միստիֆիկացիան՝ «190* թվականի ամռանը» վեպի հեղինակի առանձնահատուկ կերպարը: Ներկայիս հետազոտության մեջ կիրառվել են նաև ուսումնասիրության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ (Վ. Բանսկի):

Կիրառված **մեթոդաբանությունը** ներառում է գրական միստիֆիկացիաների համեմատական վերլուծություն, պատմական և մշակութային համատեքստի ուսումնասիրություն, ինչպես նաև միստիֆիկացիաների հետ կապված սկզբնական տեքստերի և փաստաթղթերի ուսումնասիրություն: Տվյալների հավաքման և վերլուծության համար օգտագործվել են հետազոտության ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ՝ կախված ուսումնասիրության խնդիրների բնույթից:

Ատենախոսության **գիտական նորոյթն** այն է, որ այստեղ առաջին անգամ տարանջատվել են «միստիֆիկացիային» հարակից հասկացություններ, ինչպես՝ «կեղծիք», «գրագողություն», «կեղծանունություն», «ոճավորում», «պարոդիա», «ֆիկցիա»: Հստակեցվել է «գրական միստիֆիկացիա» տերմինի իմաստը, տրվել է դրա առաջացման և կիրառման պատմությունը ռուս և հայ գրականագիտության մեջ, մշակվել է գրական միստիֆիկացիաների տիպաբանությունը, սահմանվել են Ե. Դմիտրիևայի (Վասիլևայի) - Յու. Շուցկու պսևդոթարգմանության առանձնահատկությունները, ուսումնասիրվել է Սամուիլ Կիսինի գրական միստիֆիկացիայի ստեղծման և բացահայտման պատմությունը, ինչպես նաև

պարզվել են միստիֆիկացիայի ստեղծման մեթոդները Կիսինի միստիֆիկացիայի օրինակով:

Հարցի պատմությունը: Գրականագիտության մեջ միստիֆիկացիաների ուսումնասիրության պատմությունը հասնում է ուշ Միջնադար և Վերածննդի սկիզբ, երբ անհրաժեշտություն առաջացավ բնութագրելու և ցուցակագրելու անտիկ ստեղծագործությունների մեծ թվով կեղծումներ և միստիֆիկացիաներ, որոնք ստեղծվել էին միջնադարյան հեղինակների կողմից: XIX դարի սկզբներին ի հայտ եկան բառարաններ և միստիֆիկացիաների դասակարգման առաջին փորձերը, թեև «միստիֆիկացիա» տերմինը կեղծ տեքստեր նշելու համար ձևավորվեց ավելի ուշ (առավել հանգամանայից տե՛ս Գլուխ 1-ում): Միստիֆիկացիայի երևույթը նկարագրելու առաջին փորձերից մեկը կատարվել է Շ. Նոդյեի կողմից, որը համակարգել է դրանք ըստ տեսակների՝ սկիզբ դնելով XIX դարում այս երևույթի նկատմամբ աճող հետաքրքրությանը:

XX դարում ինչպես անգլիական, ֆրանսիական և գերմանական գրականագիտության մեջ, այնպես էլ ռուսաց լեզվով սկսեցին հրատարակվել միստիֆիկացիաների մասին գրքեր, ստեղծվեցին աշխատանքներ, որոնք ընդգրկում էին միստիֆիկացիաները՝ ոչ միայն իբրև գրական, այլև մշակութային երևույթներ: Այնուամենայնիվ, միստիֆիկացիաների ամբողջական գրացանկն ստեղծելու խնդիրը դարձավ բարդ, քանի որ «անհնար է ստուգել ամբողջ [գրական] արխիվը» [Ланн 2009: 5]: Բացի այդ, բանասիրական մեթոդները միշտ չէ, որ բավարար էին տեքստերի ճշգրիտ բնութագրման համար, ինչը հանգեցրեց միստիֆիկացիայի ուսումնասիրության սահմանների տարածմանը դեպի փիլիսոփայություն, մշակութաբանություն, պատմություն և սոցիոլոգիա:

Ռուսալեզու գրականագիտության մեջ միստիֆիկացիայի հարցն առաջին անգամ որպես ուսումնասիրության առարկա սոցիոլոգիական մոտեցմամբ բարձրացրեց Եվգենի Լանը XX դարի առաջին երրորդում: Սակայն նրա աշխատանքում

«միստիֆիկացիա» և «կեղծիք» տերմինները օգտագործվում էին որպես հոմանիշներ, և գրական միստիֆիկացիայի հստակ չափորոշիչներ չկային: Հետաքրքրությունը այս երևույթի նկատմամբ նորից վերակենդանացավ 1980-ական թթ., երբ Ի. Սմիռնովը և Ե. Գենիևան առաջարկեցին միստիֆիկացիայի՝ որպես մշակութային երևույթի մեկնաբանումը՝ չտարանջատելով, սակայն, «կեղծիք» և «միստիֆիկացիա» հասկացությունները:

Երևույթի պատմագործառական իմաստավորման մեջ մեծ դեր է խաղացել Ի. Պոպովայի (1992) աշխատանքը [Попова 1992], որտեղ միստիֆիկացիան դիտարկվում է որպես տեքստի յուրահատուկ տեսակ և ֆիկտիվ հեղինակության ձև: XXI դարում այս հետաքրքրությունը շարունակեցին Դ. Ռիցցին, Ն. Փախսարյանը և Ն. Գուլիուսը. վերջինիս մենագրության մեջ «գեղարվեստական միստիֆիկացիան» առանձնացվում է որպես տեքստի ստեղծման հնարք, որն իրականանում է մետատեքստային մակարդակում:

Արևմտյան գիտությունը շարունակում է ուշադրություն դարձնել գրական միստիֆիկացիաներին: Օրինակ՝ Էնթոնի Գրաֆթոնի «Կեղծարարներ և քննադատներ» (1990) աշխատանքը խթանել է գրական կեղծիքների ուսումնասիրությունն ու միստիֆիկացիաների ցանկագրումը: XXI դարում Կ. Ռուֆվենը, Զ. Աբրամսոնը և Մ. Ռասեթը հրապարակել են գրքեր, որոնք ուսումնասիրում են միստիֆիկացիաների հիմնական բնորոշիչները և դրանց մշակութային ազդեցությունը: Հետազոտական հետաքրքրությունը տարածվել է նաև միստիֆիկացիաների ընթերցողական ընկալման վրա, ինչին անդրադարձ է կատարվում «Գրական կեղծիքները ժամանակակից Եվրոպայի վաղ փուլում» (2019) ժողովածուում, որը ներառում է գրական միստիֆիկացիաների հազվագյուտ ուսումնասիրություններ:

Հայերենով գրական միստիֆիկացիաների վերաբերյալ առանձին հետազոտություններ առայժմ չկան, թեև այս հայեցակարգը հիշատակվում է Ղևոնդ Ալիշանին նվիրված աշխատություններում:

Չնայած ուսումնասիրությունների բազմազանությանը՝ դրանց մեծ մասը վերաբերում է XIX դարի կեսերից առաջ և XX դարի սկզբից հետո տեղի ունեցած միստիֆիկացիաներին: Մոդեռնիզմի շրջանի, մասնավորապես սիմվոլիզմի գրական միստիֆիկացիաները ներկայացնում են առանձնահատուկ հետաքրքրություն, ինչպես նաև ռուս սիմվոլիստների՝ Վ. Բրյուսովի, Ե. Դմիտրիևայի, Մ. Վոլոշինի միստիֆիկացիաները, որոնք ուսումնասիրվել են Զ. Մինցի, Ա. Լավրովի և այլ հետազոտողների աշխատություններում:

Հետազոտության տեսական նշանակությունը: Նախ՝ կոնկրետացվել է «գրական միստիֆիկացիա» տերմինի իմաստը, տրվել է դրա համապարփակ սահմանումը, երկրորդ՝ ուսումնասիրվել է գրական միստիֆիկացիայի ժանրային բնույթը, լրացվել են գրական միստիֆիկացիաների համակարգման բացերը: Բացի այդ՝ հետազոտությունը որոշ չափով լրացնում է ռուս սիմվոլիստների, մասնավորապես՝ Ե. Դմիտրիևայի (Վասիլևայի) և Սամուիլ Կիսինի (Մունի) ստեղծագործությունների համեմատական ուսումնասիրության բացը: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել նախ՝ գրական միստիֆիկացիայի և մասնավորապես՝ սիմվոլիզմի գրականության մեջ այս երևույթի հետագա ուսումնասիրության համար, երկրորդ՝ Դմիտրիևայի և Կիսինի ստեղծագործությունների համեմատական վերլուծության մեջ ընդհանուր առումով, ինչպես նաև «Տանձենու տակի տնակը» շարքի, «190* թվականի ամռանը» վեպի և ««Սեր» շարքից» բանաստեղծությունների պոետիկայի՝ այլ տեսանկյունից ուսումնասիրության մեջ մասնավորապես:

Ատենախոսությունն ունի **կիրառական արժեք**. նրա արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական և գիտական գործունեության մեջ՝ գրական միստիֆիկացիայի երևույթի ուսումնասիրության ժամանակ, արծաթյա դարի միֆապոետիկական հետազոտությունների ոլորտում, XIX-XX դարերի սահմանագծի ռուս գրականության պատմության վերաբերյալ դասախոսական և սեմինար դասընթացների մշակման ընթացքում, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների

և հատուկ դասընթացների համար, որոնք նվիրված են ռուս սիմվոլիստների մի-
ֆապոետիկայի և միֆաստեղծման խնդիրներին, ինչպես նաև տեղեկատու
բառարանների կազմության ժամանակ:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաս-
տատվել է ԵՊՀ-ի՝ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության
պատմության և գրականության տեսության ամբիոնում: Ատենախոսությունը
քննարկվել է նույն ամբիոնում և ստացել դրական եզրակացություն: Աշխատանքի
հիմնական դրույթները ներկայացվել են հանրապետական և միջազգային
գիտաժողովներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ:

1. Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «միստիֆիկացիա» տերմինը
ռուսերենին անցել է ֆրանսերենից XVIII դարի վերջին, իսկ հայերենում հայտնվել
է ավելի ուշ՝ ռուսերենի միջոցով: «Գրական միստիֆիկացիա» հասկացությունը գի-
տական շրջանառության մեջ է մտել XX դարում, սակայն տերմինի հստակ
սահմանների խնդիրը պահպանվում է մինչ այժմ: Գրական միստիֆիկացիան ոչ
միայն տեքստ է, որ գրվում և հրատարակվում է ուրիշի անունից, այլև հենց այդ
հեղինակի անհատականության կառուցումն է, քանի որ հեղինակը ստեղծում է
հեղինակային «ես», որը տարբերվում է իրենից, ոճավորում է նրա վարքագիծը
և/կամ կերպարն ու կենսագրությունը, ստեղծում առասպել հեղինակի մասին,
հեղինակային դիմակ և հաճախ գրում այդ դիմակով: Աշխատանքում առաջարկ-
վում է հետևյալ սահմանումը՝ **Գրական միստիֆիկացիան հեղինակային հորին-
ված կերպարի և/կամ նրա մասին առասպելի կառուցումն է գրական
գործընթացում:**

2. Գրական միստիֆիկացիայի հիմնական խնդիրներից մեկը հեղինակու-
թյան հարցն է: Օ. Օսմովսինայի կողմից առանձնացված հեղինակային դիմակի
գործառման ձևերին (ոճական հնարք, ֆիկտիվ հեղինակի գեղարվեստական կեր-
պար, իրական / իբր իրական հեղինակ ստեղծագործության կերպարների

շարքում) ավելացրել ենք ևս մեկը՝ որպես իրական / իբր իրական մարդ արտատեքստային իրականության մեջ: Այսպիսով՝ ստեղծվում է կեղծ տարածք, որտեղ ներտեքստային տարրերը դառնում են արտատեքստային իրականության մաս:

Հեղինակի կերպարի կառուցումը գրական միստիֆիկացիայի ստեղծման հիմնարար հնարքն է:

3. Միստիֆիկացիան կարելի է անվանել գրական ինքնակոչություն: Ինքնակոչն այն անձն է, որն իրեն վերագրում է օտար/այլ անուն: Անունի փոխարինման՝ Ի. Պոպովայի առանձնացրած տեսակներին և դրա շարժառիթների ձևերին (անցյալի երևելի գրողի կամ մտածողի անվան յուրացում, հորինված ցանկացած անվան յուրացում, միստիֆիկատորի հեղինակի անվան՝ ծածկագրի վերածում) ավելացրել ենք ևս մեկը. հեղինակը ստեղծում է տեքստ անանուն անձի կողմից՝ ոճավորելով այն միստիֆիկատորի կողմից ընտրված դարաշրջանի *հավանական* հեղինակի ձեռագրով: Մի կողմից սա օբյեկտիվացնում է պատմության առարկան՝ վերագրելով դրան պատմական ընտրված ժամանակաշրջանին բնորոշ գծեր, մյուս կողմից՝ ընդլայնում հնարավոր հեղինակության շրջանակը՝ ընթերցողին ստիպելով *գուշակել* ստեղծագործության հեղինակին:

4. Գրական միստիֆիկացիայի կարևոր առանձնահատկություններից է դրա խաղային բնույթը, ինչի շնորհիվ այն կարող է ունենալ տարբեր ձևեր ու տեսակներ. (հնարք կամ ամբողջական ստեղծագործություն, պատմության կեղծում կամ մարդկանց զվարճացնելու միջոց, գաղափարախոսության և քարոզչության միջոց): Գոյություն ունեցող գրական միստիֆիկացիաների դասակարգումների քննությունը հաստատեց, որ հեղինակային «ես»-ի սուբյեկտի հիման վրա Ե. Լանի կողմից առաջարկված և Ի. Պոպովայի կողմից ընդլայնված դասակարգումն ամենահաջողվածն է: Ներկայիս հետազոտության մեջ ճշգրտվել և ներկայացվել է գրական միստիֆիկացիաների նոր տիպաբանություն. դրանք ներառում են բուն գրական միստիֆիկացիաները, կվազիմիստիֆիկացիաները (պատմական միստիֆիկացիաներ) և մետամիստիֆիկացիաները (պատմամշակութային

հետազոտության միստիֆիկացիաները՝ իրենց ենթատեսակներով, ինչպիսիք են պսևդոկենսագրությունը, պսևդոթարգմանությունը, ծանոթագրությունները և գրախոսությունները:

5. Գրական միստիֆիկացիայի ժանրային բնույթը վկայում է, որ այս երևույթի համար անհնար է առանձնացնել ժանրային բնորոշ հատկանիշներ: Գրական միստիֆիկացիան իրենից ներկայացնում է ֆիկտիվ ժանր (ըստ Տ. Պոպովայի), որը ներկայանում է որպես որոշակի ժանր, սակայն իրականում այդպիսին չէ: Ի տարբերություն մետաժանրի՝ գրական միստիֆիկացիան չի միավորում տարանջատված տարրերն ամբողջության մեջ, այլ ձգտում է անորոշ դարձնել տեքստի և իրականության սահմանները՝ վերացնելով նարատիվը:

6. Միստիֆիկացիան առանձնահատուկ ժողովրդականություն է վայելել ռոմանտիկների և սիմվոլիստների երկերում, որոնք ձգտում էին ոչ միայն փոխակերպել կյանքը, այլև այն վերածել տեքստի, կյանքի մի կտորից ստեղծել արվեստի գործ: Կյանքն ու ստեղծագործությունը միֆականացվում էին՝ դառնալով միստիֆիկացիաների հիմք: Սիմվոլիստների կյանքում և ստեղծագործության մեջ գրական միստիֆիկացիան դարձավ արվեստը կյանքի և կյանքը արվեստի վերափոխելու միջոց:

7. «Տանձենու տակի տնակը» շարքի վերլուծությունը ցույց տվեց, որ այն պսևդոթարգմանություն է, որտեղ միավորվում են հեղինակային երկու դիմակներ՝ հորինված չինացի պոետ Լի Սյան Տզիի և Դմիտրիևայի լիրիկական «ես»-ի, ով իր սեփական կենսագրությունը վերափոխում է բանաստեղծական տեքստի: Դմիտրիևան ստեղծում է ինքնատիպ երկ ռուսական սիմվոլիզմի ավանդույթներով՝ օգտագործելով այնպիսի հայեցակարգեր, որոնք բնորոշ են չինական և սիմվոլիստական մշակույթներին:

8. Ռուսական սիմվոլիզմում գրական միստիֆիկացիայի բացառիկ օրինակ է Սամուիլ Կիսինի (Մունի) գրական միստիֆիկացիան. Մունին փորձել է

մարմնավորվել Ալեքսանդր Բեկլեմիշևի կերպարում՝ գրելով ստեղծագործություններ նոր «ես»-ի անունից: Բեկլեմիշևի կերպարի միջոցով Կիսինը փորձել է վերաիմաստավորել իր ստեղծագործությունը, վերացնել կյանքի և գրականության սահմանները, ամբողջությամբ ենթարկել կյանքն արվեստին՝ արարչի նման կերտելով իր կյանքը: Սակայն *մարմնավորման* անհաջողությունը հանգեցրել է ստեղծագործության ինքնահեգնանքի և խեղաթյուրման, ինչը շեշտադրում է 1900-ականների երկրորդ կեսի սիմվոլիզմի կենտրոնական խնդրից մեկը՝ հեղինակային ինքնանույնականացման խնդիրը:

9. Ս. Կիսինի տեքստերի ուսումնասիրությունը բացահայտում է նրա ձգտումը՝ ստեղծելու այլ հեղինակային «ես»՝ մոդելավորելով ռոմանտիկ հեղինակի կերպար: Կառուցելով հեղինակային նոր ոճ՝ Կիսինը ներմուծում է այլ թեմաներ, ժանրեր ու ձևեր, փորձում տարբեր ռիթմեր և տաղաչափական ձևեր՝ անդրադարձ կատարելով իր ռոմանտիկական և մոդեռնիստական ինքնությունների հարաբերակցությանը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը, շարադրվում են հետազոտության նպատակները և խնդիրները, նկարագրվում է աշխատանքի կառուցվածքը: Տրվում է գրական միստիֆիկացիաների ականարկ համաշխարհային գրականության մեջ, ներկայացվում է դրանց ուսումնասիրման պատմության ուրվագիծը:

Գլուխ 1-ում՝ «Գրական միստիֆիկացիան գրականության տեսության համատեքստում», տրվում է միստիֆիկացիայի երկույթի տեսական վերլուծությունը:

Բաժին 1.1. –ում մենք մատնանշում ենք ներկայումս առկա այն խնդիրները, որոնք կապված են «միստիֆիկացիա» բառի իմաստի և «գրական

միստիֆիկացիա» հասկացության սահմանների ճշգրտման հետ: Տրվում են «գրական միստիֆիկացիա» տերմինի սահմանները ռուսալեզու և հայալեզու գիտական միջավայրում, ինչն արտացոլված է նաև բառարաններում ու հանրագիտարաններում: Մենք ուշադրություն ենք դարձնում «գրական միստիֆիկացիա» տերմինի մեկնաբանության և կիրառման բազմիմաստությանը, նաև առաջարկում ենք հետևյալ սահմանումը. **գրական միստիֆիկացիան հորինված հեղինակային կերպարի և/կամ դրա մասին առասպելի կառուցումն է գրական գործընթացում: Բաժին 1.2.** –ում մենք պարզաբանել ենք «միստիֆիկացիա» տերմինի իմաստը ոչ միայն բառի ստուգաբանության, դրա մեկնաբանության և կիրառման տեսանկյունից, այլև նմանատիպ երևույթների համատեքստում: Մենք տարանջատել ենք «միստիֆիկացիա», «կեղծանունություն», «կեղծիք», «գրագողություն», «նմանակում», «ծաղրանմանակում» և «ոճավորում» հասկացությունների իմաստները՝ հստակեցնելով «գրական միստիֆիկացիա» տերմինը, որը պարունակում է խաղային սկզբունք և *հեղինակային սուբյեկտության կառուցում:* **Բաժին 1.3.** –ում ուշադրությունը կենտրոնացված է գրական միստիֆիկացիայի առասպելաբանական և խաղային նախասկզբի վրա: **Բաժին 1.4.** –ում հանգել ենք այն եզրակացության, որ անհնար է առանձնացնել միստիֆիկացիայի որևէ ժանրի կամ նույնիսկ մետաժանրի բնորոշ հատկանիշ, և գրական միստիֆիկացիան ավելի շատ գրական փաստ է (ըստ Յու. Տինյանովի տերմինի), որն ունակ է ընդունելու ժանրային տարբեր հատկանիշներ: **Բաժին 1.5.** –ում մենք ուսումնասիրում ենք ներկայումս գոյություն ունեցող միստիֆիկացիաների դասակարգումները: Լրամշակելով և ճշգրտելով Ե. Լանի և Ի. Պոպովայի առաջարկած դասակարգումը՝ մենք ներկայացրել ենք գրական միստիֆիկացիաների հետևյալ տիպաբանությունը. գրական միստիֆիկացիաները ներառում են բուն գրական միստիֆիկացիաներ, կվազիմիստիֆիկացիաներ (պատմության միստիֆիկացիա) և մետամիստիֆիկացիաներ (պատմամշակութային հետազոտության

միստիֆիկացիա). կվազիմիստիֆիկացիաների և մետամիստիֆիկացիաների ենթատեսակներն են պսևդոկենսագրությունը, պսևդոթարգմանությունը, ծանոթագրությունները, գրախոսությունները և այլն: **Բաժին 1.6.** –ը նվիրված է գրական միստիֆիկացիայում հեղինակի կերպարին և անունի պոետիկային: Հեղինակային դիմակի՝ Օ. Օսմովսինայի կողմից առանձնացված գործառության ձևերին մենք ավելացրել ենք ևս մեկը. գրական միստիֆիկացիայում հեղինակային դիմակը գործում է որպես իրական/իբր իրական մարդ արտատեքստային իրականության մեջ: Ի. Պոպովայի կողմից առանձնացված անվան փոխարինման տեսակներին և դրա շարժառիթների ձևերին ավելացրել ենք ևս մեկը. հեղինակն ստեղծում է տեքստ անանուն կերպարից, ռճավորում այն՝ ըստ միստիֆիկատորի կողմից ընտրված դարաշրջանի հավանական հեղինակի ձեռագրի:

Գլուխ 2-ում՝ «Գրական միստիֆիկացիան ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ» («Литературная мистификация в литературе русского символизма»), ուսումնասիրվում է գրական միստիֆիկացիայի՝ որպես երևույթի և գեղարվեստական հնարքի դերը կոնկրետ հեղինակների ստեղծագործության մեջ կոնկրետ երկերի օրինակով:

Բաժին 2.1. –ում մանրամասն ուսումնասիրվում է Ա. Բելու «միֆաստեղծում - բառաստեղծում - կենսաստեղծում» եռաստիճանությունը և դրա կապը ռուս սիմվոլիստների միստիֆիկացիաների հետ: **Բաժին 2.2.** –ում ներկայացվում և նկարագրվում են ռուս սիմվոլիստների գրական միստիֆիկացիաները: **Բաժին 2.3.** –ում մանրամասն դիտարկվում է «Տանձենու տակի տնակը» շարքի միստիֆիկացիան՝ պսևդոչինական կեղծ թարգմանությունը, որի հեղինակներն են Ելիզավետա Դմիտրիևան, ով ավելի հայտնի է Չերոբինա դե Գաբրիակի անունով, և արևելագետ Յուլիյան Շուցկին: Շարքը պսևդոթարգմանություն է, որտեղ գոյակցում են ինչպես հորինված չինական պոետ Լի Սյան Յզիի հեղինակային աստիճանակարգությունը, այնպես էլ Դմիտրիևայի լիրիկական «ես»-ը, ով իր կենսագրությունը վերածում է

բանաստեղծական տեքստի: Դմիտրիևան, ոճավորելով շարքը, ստեղծում է ռուսական սիմվոլիզմի ավանդույթներին համապատասխան ինքնատիպ ստեղծագործություն: **Բաժին 2.4.** –ում մենք դիտարկել ենք Ս. Կիսինի միստիֆիկացիայի պատմությունն ու դրա բացահայտումը, իսկ **բաժին 2.5.** –ում մանրամասն ուսումնասիրել ենք Ս. Կիսինի (Մունի)՝ Ա. Բեկլեմիշևի կերպարով մարմնավորվելու փորձը, որը արտահայտվել է «190* թվականի ամռանը» վեպում և ««Սեր» շարքից» բանաստեղծություններում: Բեկլեմիշևի կերպարում Կիսինը փորձել է վերաիմաստավորել իր ստեղծագործությունը, ջնջել կյանքի և գրականության միջև սահմանը, ամբողջությամբ ենթարկել կյանքն արվեստին՝ որպես արարիչ կերտելով իր կյանքը: Սակայն, չկարողանալով լիովին մարմնավորվել այդ կերպարում, Մունին խեղաթյուրում է իր իսկ ստեղծագործությունը, հեզնում է իր ջանքերը՝ զբաղեցնելու արարչի տեղը:

Բաժին 2.6. –ը նվիրված է գրական միստիֆիկացիայի ստեղծման մեթոդներին: Բառապաշարային-իմաստային, մոտիվային և թեմատիկ ֆորմալ վերլուծության ընթացքում, ինչպես նաև հաճախականության բառարանի միջոցով բացահայտվել է, որ Ս. Կիսինը, ով ամբողջությամբ պատկանում է սիմվոլիստական մշակույթին և դրանում ներառված գրական ավանդույթին, 1907-1908 թվականներին փորձելով փոխել իր անհատականությունը, կառուցում է հեղինակային նոր «ես»՝ վերակերտելով ռոմանտիկ հեղինակի անհատականությունը, միևնույն ժամանակ անդրադարձ կատարելով այս կերպարին և իր մոդեռնիստական ինքնության հետ նրա հարաբերակցությանը: Ստեղծելով հեղինակային նոր «ես»՝ Կիսինը փորձում է օժտել նրան իրենից տարբեր գրական լեզվով. նա կառուցում է այլ թեմատիկա, անդրադառնում այլ ժանրերի և ձևերի, օգտագործում այլ ռիթմեր և տաղաչափություն:

Եզրակացությունների մեջ համակցվում են հետազոտության ընթացքում ստացված արդյունքները:

Հավելվածում ներկայացվում են Ա. Կիսինի և Ա. Բեկլեմիշևի պոետիկաների տարրերի համեմատական արդյուակը, ինչպես նաև Ա. Կիսինի (Մունի) և Ա. Բեկլեմիշևի՝ 1907-1908 թթ. հրապարակված ստեղծագործությունների հաճախականության բառարանը:

Օգտագործված գրականության ցանկը ներառում է աշխատանքի ընթացքում օգտագործված աղբյուրների ցանկը:

Ատենախոսությունը գրված է ռուսերեն, աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 163 էջ:

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Александр Беклемишев – литературная мистификация С. Киссина (Муни). Повесть «Летом 190* года» // Studia Litterarum. 2022, Т.7, №4, сс. 142-155. DOI: <https://doi.org/10.22455/2500-4247-2022-7-4-142-155>

2. Литературная мистификация С. Киссина и стихотворение В. Ходасевича «Поэту»: история одного разоблачения // Вестник Ереванского Университета: Русская Филология. Т. 9, №1 (22), 2023, сс.13–23.

3. Литературная мистификация: к проблеме термина // Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. 2020, №197, сс. 210-219.

4. К вопросу о связи повести «Летом 190* года» и стихотворений «Из цикла “Любовь”» Александра Беклемишева – литературной мистификации Муни (С. Киссина) // Культурология, искусствоведение и филология: современные взгляды и научные исследования: сб. ст. по материалам LVIII междунар. науч.-практ. конф. №3(52). М.: Изд. «Интернаука», 2022, сс. 37-42.

5. Признаки фикциональности в литературной мистификации (на примере «Велесовой книги») // Летняя школа по русской литературе. СПб.: 2016, Т. 12. №2, сс. 221-230.

6. Читательское восприятие литературной мистификации (на примере «Велесовой книги») // Печать и Слово Санкт-Петербурга (Петербургские чтения-2015): в 2ч. Ч.1: Книжное дело. Культурология. Межкультурные коммуникации: сб. науч. тр. СПб.: СПбГУПТД, 2016, сс. 46-53.

7. «Велесова книга» как литературная мистификация. Металингвистический аспект // Пятый этаж. Сборник научных статей молодых учёных. Барнаул: Изд-во Алтайского гос. пед. ун-та, 2015, сс. 179-181.

8. «Велесова книга» как текст-фальсификат в контексте языковых, литературных и культурно-исторических традиций Древней Руси // Современные концепции научных исследований. М.: Евразийский союз ученых, №6, 2014, сс. 47-50.

9. «Велесова книга» и моделирующие семиотические системы Древней Руси // Сборник научных статей международной конференции «Ломоносовские чтения на Алтае: фундаментальные проблемы науки и образования», Барнаул, 11-14 ноября, 2014. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2014, сс. 2260-2269.

10. «Велесова книга»: история фальсификации и вызовы современности // Наука та сучасність: виклики ХХІ століття – Частина IV: Міжнародна конференція, м. Київ, 31 січня 2014 р. Центр наукових публікацій, с. 64-68.

ПЕТРС-БАРЦУМИАН АНИ

ЛИТЕРАТУРНАЯ МИСТИФИКАЦИЯ: ПРОБЛЕМАТИКА И ВОПЛОЩЕНИЕ В ЛИТЕРАТУРЕ РУССКОГО СИМВОЛИЗМА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук. Специальность 10. 01. 04 – «Теория литературы». Защита диссертации состоится 11 декабря в 14³⁰ часов на заседании Специализированного Совета 012 по литературоведению в г. Ереван, 0025, улица Абовяна 52а, армянский филологический факультет ЕГУ, аудитория 202.

АННОТАЦИЯ

Актуальность диссертации. Актуальность диссертации заключается в возможности изучения литературных мистификаций с разных точек зрения: культурно-исторического аспекта, определённых литературных школ и творчества отдельных авторов. Литературная мистификация может быть предметом анализа в философии, филологии, истории, социологии, психологии и политологии. Исследователи сталкиваются с рядом проблем, таких как авторство, методы создания и идентификации мистификаций, их типология, архитектоника и место в теории литературы. Эти вопросы остаются спорными и недостаточно разработанными, особенно в контексте русских символистов, что и обуславливает актуальность данного исследования.

Цель и задачи диссертации. Цель исследования – конкретизировать определение литературной мистификации и представить типологию литературных мистификаций; изучить феномен литературной мистификации в литературе русского символизма; выявить особенности псевдоперевода Е. Дмитриевой (Васильевой) – Ю. Щуцкого; определить методы создания авторской инстанции в литературной мистификации на примере творчества Самуила Кисина (Муни). Для этого мы формулируем теоретическую основу, актуальную для данного вопроса, рассматриваем формы, которые принимает мистификация в литературе, включая её жанровые признаки, а также анализируем примеры конкретных произведений.

Научная новизна диссертации. В исследовании впервые разведены смежные с «мистификацией» понятия, конкретизировано значение термина «литературная мистификация», дана история его возникновения и употребления в российском и армянском литературоведении; разработана типология литературных мистификаций; определены особенности псевдоперевода Е. Дмитриевой–Ю. Щуцкого; исследована история создания и разоблачения литературной мистификации С. Кисина, а также выявлены методы создания литературной мистификации на примере мистификации Кисина.

Методология диссертации. Используемая методология включает сравнительный анализ литературных мистификаций, изучение исторического и культурного контекста, а также изучение первичных текстов и документов, связанных с мистификациями. Для сбора и анализа данных используются как качественные, так и количественные методы исследования, в зависимости от характера вопросов исследования.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка использованной литературы.

Во **Введении** мы обосновываем выбор темы, её актуальность и новизну, а также даём обзор существующих исследований в области литературной мистификации.

В **Главе 1 «Литературная мистификация в аспекте теории литературы»** мы проводим теоретический анализ этого феномена. В ней рассматриваются проблемы определения термина «литературная мистификация», мифологические и игровые аспекты, а также жанровая природа данного явления. Приводится классификация литературных мистификаций, исследуется поэтика имени в литературной мистификации.

В Главе 2 «Литературная мистификация в литературе русского символизма» исследуется роль литературной мистификации в творчестве русских символистов. Мы приводим мистификации, созданные русскими символистами; более глубоко и подробно исследуем цикл псевдокитайского псевдоперевода «Домик под грушевым деревом» Елизаветы Дмитриевой и Юлиана Щуцкого, творчество Самуила Киссина (Муни) и его опыт воплощения в Александра Беклемишева, методы создания литературной мистификации.

В **Заключении** мы подводим итоги нашего исследования.

Диссертация написана на русском языке, объём работы – 163 страницы.

ANI PETRS-BARTSUMIAN

LITERARY MYSTIFICATION: ISSUES AND MANIFESTATIONS IN RUSSIAN SYMBOLIST LITERATURE

Dissertation for acquiring Philological science degree. Field of specialization: 10.01.04. - “Literary Theory”. The defence of the dissertation will be held on December 11, 2024 at 14:30 at the HQC of RA’s Specialized Council 012 of “Literature Studies” in Yerevan State University. Address: 0025, Yerevan, Abovyan Str. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, Room 202.

SUMMARY

Relevance of the dissertation. The relevance of the dissertation lies in the possibility of studying literary mystifications from various perspectives, including cultural and historical aspects, specific literary schools, and the works of individual authors. Literary mystification can be analyzed within the frameworks of philosophy, philology, history, sociology, psychology, and political science. Researchers encounter several issues, such as authorship, methods of creating and identifying mystifications, typology, architectonics, and the role of mystification within literary theory. These questions remain contentious and underexplored, particularly in the context of Russian Symbolism, which underscores the significance of this research.

Purpose and problems of the dissertation. The aim of this research is to specify the definition of literary mystification and present a typology of literary mystifications; to investigate the phenomenon of literary mystification in Russian Symbolist literature; to identify the features of the pseudotranslation by E. Dmitrieva and Yu. Shchutsky; and to determine the methods of creating an authorial instance in literary mystification through the works of S. Kissin. To achieve

this, we establish a theoretical framework relevant to the topic, explore the forms that mystification takes in literature and analyze examples from specific works.

Scientific novelty of the dissertation. It distinguishes adjacent concepts related to "mystification", such as "forgery", "plagiarism", "pseudonymity", "stylistics", "parody" and "fiction." The definition of the term "literary mystification" is clarified, along with its historical origins and usage in Russian and Armenian literary studies. A typology of literary mystifications is developed; the characteristics of the pseudotranslation by E. Dmitrieva and Yu. Shchutsky are identified; the history of the creation and exposure of literary mystification by Samuel Kissin is examined; and methods of creating literary mystification are revealed through Kissin's mystification.

Dissertation methodology. The methodology employed includes comparative analysis of literary mystifications, examination of historical and cultural contexts, and the study of primary texts and documents related to mystifications. Both qualitative and quantitative research methods are utilized for data collection and analysis, depending on the nature of the research questions.

Structure of the dissertation. The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, and a bibliography.

In the **Introduction**, we justify the choice of topic, its relevance and novelty, and provide an overview of existing research in the field of literary mystification.

In **Chapter 1, "Literary Mystification in the Aspect of Literary Theory"**, we conduct a theoretical analysis of this phenomenon, addressing issues related to the definition of the term "literary mystification", its mythological and playful aspects, as well as its genre nature. A classification of literary mystifications is provided, and the poetics of name in literary mystification is explored.

Chapter 2, "Literary Mystification in Russian Symbolist Literature", examines the role of literary mystification in the works of Russian Symbolists. We present mystifications created by Russian Symbolists and conduct a deeper investigation into the cycle of pseudotranslation "Domik pod grushevym derevom" ["The House Under the Pear Tree"] by E. Dmitrieva and Yu. Shchutsky, as well as the works of S. Kissin and his embodiment in Alexander Beklemishev, including methods of creating literary mystification.

In the **Conclusion**, we summarize the results of our research.

The dissertation is written in Russian, the total volume of the work is 163 pages.